

ՄԱՐԻԱՍ ԱՏԱԼՅԱՆ

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԿՈՆՖԼԻԿՏԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԼԻՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ*

Բանալի բառեր և արտահայտություններ. Բարոյական կոնֆլիկտ, բարոյական երկընտրանք, սոցիալական կոնֆլիկտ, հնարավորություն, լինելիություն, ունիվերսալիզմ, պարտիկուլյարիզմ:

Բարոյական կոնֆլիկտի թեման արդիական է եղել բարոյագիտության պատմության գրեթե բոլոր ժամանակաշրջաններում: Սույն հոդվածում փորձ է արվել բարոյական կոնֆլիկտը ներկայացնել որպես սոցիալական կոնֆլիկտի տարատեսակ, տեսականորեն բացահայտել բարոյական կոնֆլիկտի հնարավորությունը բարոյագիտական ունիվերսալիզմի, իսկ բարոյական կոնֆլիկտի լինելիությունը բարոյագիտական պարտիկուլյարիզմի տեսանկյունից:

Կոնֆլիկտի մասին պատկերացումը՝ որպես հակապայքարի, հակադրության (լատ. Conflictus - բախում) դրսևորվում է խոսքի՝ լեզվի զարգացման վաղ փուլերում՝ արտացոլելով, «մենք» և «նրանք» կատեգորիաների հետ մեկտեղ, անհատների և խմբերի միջև բախումների առօրյա փաստերը: Հարկ է նշել, որ գրականության մեջ համընդունելի է կոնֆլիկտի հետևյալ սահմանումը. «սոցիալական հարաբերությունների, սոցիալական խմբերի, մարդկանց հարաբերությունների համակարգում հակասությունների զարգացման բարձրագույն փուլ է, որը բնութագրվում է սոցիալական հանրույթների և անհատների հակադիր հետաքրքրությունների և միտումների խորությամբ»: (1)

Ժամանակակից սոցիալական փիլիսոփայությունը բարոյականությունը դիտում է որպես հասարակական կարևորագույն համալիրներից մեկը: Այն կարգավորում է մարդկանց վարքն ու գործունեությունն առանց բացառության բոլոր ոլորտներում՝ մասնագիտական գործունեություն իրականացնելիս, կենցաղում, քաղաքականության և գիտության մեջ, անձնական, ընտանեկան և միջազգային հարաբերություններում: Բարոյականության սկզբունքները սոցիալ-համընդհանուր նշանակություն ունեն և վերաբերում են ողջ մարդկությանը՝ կենտրոնացնելով այն ընդհանուրն ու կարևորը, ինչն էլ կազմում է միջանձնային հարաբերությունների մշակույթը: Հետևաբար, այդ սկզբունքների խախտումը կարող է առաջացնել հասարակական բարոյական կոնֆլիկտ:

Կարևոր է նշել, որ հաճախ նեղ իմաստով բարոյական կոնֆլիկտը նույնացնում են բարոյական երկընտրանքի հետ: Բարոյական երկընտրանքի պարագայում մենք գործ ունենք հավասարաթեք բարոյական նորմերի հետ, որոնցից որևէ մեկի իրականացումն անխուսափելիորեն առաջացնում է բարոյական խնդիրներ: Այս դեպքում, ինչպես իրավացիորեն նկատել է բարոյական երկընտրանքների և բարոյական տեսության հիմնադիր Յ. Մեսսնը՝ «մարդն ունենում է մեղքի զգացում, խղճի խայթ»: (2)

Բարոյական կոնֆլիկտը փոխհարաբերվող կողմերի հակապայքար է, որն ուղեկցվում է հուզական լարվածությամբ, ինչի արդյունքում էլ փոխադարձ վնաս (նյութական, ֆիզիկական, հոգեբանական) են կրում կողմերը: Արդյունքում գե-

*Հոդվածն ընդունվել է 08.10.2018թ.:

Հոդվածը տպագրության է ներառվել *ՀԱԱՀ հայոց պատմության ու փիլիսոփայության ամբիոնը*:

րիշխում է այն կարծիքը, որ կոնֆլիկտը միշտ անցանկալի երևույթ է և անհրաժեշտ է այն շուտափույթ լուծել: Սակայն, ինչպես ցույց է տալիս կյանքը, կոնֆլիկտը հաճախ օգնում է բացահայտել տեսակետների բազմազանությունը, պարզել այլընտրանքները, տալիս է լրացուցիչ տեղեկատվություն:

Հիմք ընդունելով վերոնշյալը՝ կարծում ենք միանգամայն իրավացի է Ռ. Ղաբենդորֆի տեսակետն այն մասին, որ ոչ թե կոնֆլիկտի առկայությունը, այլ բացակայությունն է աննորմալ և զարմանալի:(3) Գաղտնիք չէ, որ երբեմն հասարակության մեջ հենց նոր հարաբերություններ են հաստատվում մի շարք կոնֆլիկտների միջոցով, որոնք անդրադառնում են սոցիալական կազմակերպության բոլոր հիմնական մակարդակների վրա՝

- քաղաքակրթական. հին արժեքային համակարգի բեկման և նոր արժեքային համակարգի հաստատման հետ կապված կոնֆլիկտներն են:
- կառուցվածքային փոփոխությունների. հին և կրկին ձևավորվող սոցիալական շերտերի և խմբերի միջև կոնֆլիկտներն են:
- հիմնարկային. ձեռնարկությունների մրցունակության, կազմակերպչական հարաբերությունների և ֆինանսական կապերի վերակառուցման հետ կապված կոնֆլիկտներն են:
- առօրյա կյանքի. մարդկանց կողմից օգտագործվող սոցիալական ինքնահաստատման նոր հնարավորությունների հետ և նոր ձևավորվող արժեքների ու նորմերին, շուկայական հարաբերությունների պահանջներին բնակչության մեծամասնության հարմարվողականության բարդ գործընթացների հետ կապված կոնֆլիկտներն են:

Ցավոք, մարդկանց համար միշտ չէ, որ ռեսուրսների հասանելիությունը միատեսակ է, ուստի սոցիալական անհավասարության հետևանքով առաջանում է սոցիալական կոնֆլիկտը: Կարծում ենք սխալված չենք լինի, եթե համաձայնենք Յու. Ջապրուդսկիի այն տեսակետին, որ «Սոցիալական կոնֆլիկտը սոցիալական սուբյեկտների զարգացման օբյեկտիվորեն տարաբնույթ նպատակների, հետաքրքրությունների, միտումների հակապայքարի ակնհայտ կամ թաքնված վիճակ է, սոցիալական ուժերի ուղղակի կամ անուղղակի բախում, որն էլ դեպի նոր սոցիալական միասնությանն ուղղված պատմական շարժման յուրահատուկ ձև է»:(4) Իհարկե, սոցիալական կոնֆլիկտը անցանկալի երևույթ է, որը քայքայում է նորմալ գործող սոցիալական համակարգը, բայց դրա ընթացքում հայտնվում են ուժեր, որոնք համակարգը բերում են հավասարակշռության: Գաղտնիք չէ, որ կոնֆլիկտը հաճախ դիտվում է ոչ որպես նորմայից շեղում, այլ որպես սոցիալական հարաբերությունների նորմա: Սակայն, չպետք է մոռանալ նշել նաև, որ, ըստ Ֆրոմի, «բարոյական նորմերը բացարձակ չեն և հասարակությունը պետք է հաշվի առնի իր անդամների շահերը, հաշվի առնելով դասակարգային տարբերությունները, ապահովի բոլոր անդամների լիարժեք մարդկային զարգացումը: Այս ամենի արդյունքում կնվազեն բարոյական կոնֆլիկտները»:(5) Այստեղ տեղին է հիշատակել Լ. Կոզերի կոնֆլիկտի դրական-գործառնական տեսությունն, ըստ որի «սոցիալական կոնֆլիկտը պայքար է արժեքների համար և որոշակի կարգավիճակի, հավակնություն է իշխանության և ռեսուրսների, պայքար, որտեղ հակառակորդների նպատակներն են վնաս հասցնել հակառակորդին, չեզոքացնել, օտարել: Կոնֆլիկտի միջոցով ուղղվում են թերությունները և հաստատվում է առաջընթաց»:(6)

Հետաքրքիր է նկատել, որ անցումային փուլում գտնվող հասարակությունների համար այս պնդումը դժվար ընդունելի է: Նման հասարակություններում առանձնահատուկ տեղ են զբաղեցնում հասարակության և անձի հարաբերության, հասարակական հարաբերությունների, արժեքների, նորմերի անհատականացման, դրանց յուրացման ու վերարտադրության հիմնախնդիրները: Արդյունքում տեղի են ունենում հասարակարգի սոցիալ-տնտեսական, գաղափարաքա-

ղաքական, բարոյահոգեբանական հիմունքների համակարգային փոփոխություններ: Այստեղ հստակ սահմանված չեն որոշակի նորմեր, ձևավորման փուլում է արժեքային համակարգը և սոցիալական մի շարք արժեքներ սկսում են հակասել միմյանց: Սակայն ակտիվ գործունեություն ծավալելու համար անհրաժեշտ են բավարար պայմաններ, նպաստավոր միջավայր, կայացած արժեհամակարգ, որոնք անհաղթահարելի արգելքներ չեն ստեղծի հասարակության անդամների համար: Նման դեպքերում, ըստ Գ. Սողոմոնյանի, երկար տարիներ մարդկանց վարքը կարգավորող արժեքների ու նորմերի բախումը վերափոխված հասարակության արժեքների ու նորմերի հետ, զարգացման որոշակի աստիճանում վերածվում է կոնֆլիկտի: (7)

Ինչպես արդեն նշվել է, բարոյական կոնֆլիկտի հնարավորությունն ու լինելիությունը դիտարկելու գործընթացում շեշտը դրված է հիմնականում իրար հակադիր երկու մեթոդաբանական մոտեցումների՝ ունիվերսալիզմի և պարտիկուլյարիզմի ուսումնասիրության վրա: Ժամանակակից բարոյագիտության մեջ ընդունված է ունիվերսալիստների շարքը դասել հույն փիլիսոփա Պլատոնին, ստոիցիզմի և էպիկուրիզմի ներկայացուցիչներին, միջնադարի մտածող Օգ. Երանելիին, գերմանական դասական փիլիսոփայության ականավոր ներկայացուցիչ Ի. Կանտին: Պարտիկուլյարիստների թվին են դասվում հույն դասական փիլիսոփայության հիմնադիր Արիստոտելը, էքզիստենցիալ փիլիսոփայության ներկայացուցիչները, Ա. Մակինտայիրը:

Համաձայն բարոյագիտական ունիվերսալիզմի, բարոյական արժեքը համընդհանուր բնույթ է կրում, այսինքն՝ յուրաքանչյուր ոք պետք է այն իրականացնի: Բարոյագիտական ունիվերսալիզմը չի ենթադրում մտքերի և արարքների միանմանություն կամ ցանկացած իրավիճակում համապատասխան բարոյական իրահանգների պարտադիր կատարում: Սակայն հարկ է նշել, որ համընդհանրացում չի նշանակում անհատական կեցության առանձնացվածության և եզակիության անտեսում: Հիմնվելով աստվածաշնչյան միավորման իդեալի վրա՝ բարոյագիտությունը որոշակի չափորոշիչներ է դնում աշխարհի, ուրիշ մարդկանց և ինքն իր նկատմամբ մարդկային վերաբերմունքի առաջ: Իդեալը սահմանում է Բացարձակի, օրենքի առաջ մարդկանց հավասարություն. հանդուրժողականություն և հարգանք ուրիշի նկատմամբ, այն է՝ օգնել, հոգ տանել ուրիշների մասին:

Հատկանշական է բարոյագիտական ունիվերսալիզմում իրականությունը և իդեալը կապակցող բարոյական պարտադրականության յուրահատկությունը: Նման դեպքում վերանում է պարտադիրի և գոյություն ունեցողի կոնֆլիկտը, քանի որ բարոյագիտության պահանջները համակողմանի են: Պլատոնը ևս, կարևորելով ընդհանուրը, իր հայացքներում բարձրագույն գաղափարը՝ իդեան, համարում է բարոյականության չափանիշ: Էպիկուրի կարծիքով՝ երջանկության ձգտումը մարդկանց կստիպի հետևել բնականին, որի արդյունքում էլ հնարավոր կլինի խուսափել բարոյական կոնֆլիկտներից:

Չմերժելով երջանկության գաղափարը՝ ստոիկները հանուն բարձրագույն բարոյական նորմերի, պատրաստ էին կիսաճգնավորական կյանք վարել, որի դեպքում արժանապատիվ մարդն իրերն ընդունում է այնպես, ինչպես կան:

Բարոյագիտական ունիվերսալիզմի մոտեցումն առավել ընդգծվում է քրիստոնեական գաղափարների միջոցով: Այս համատեքստում առավել հետաքրքիր է Օգ. Երանելու այն տեսակետն, ըստ որի մարդն իր գործերում պետք է ձգտի հասնել բարձրագույն բարիքին, քանի որ բարոյական կոնֆլիկտները մեր անկատարության հետևանք են: Ուստի, ըստ Երանելու, «Քո բոլոր մտքերը ճշմարիտ են, և ովքեր տեսնում են այդ ճշմարտությունը և ընդունում են, եկեք սիրենք միմյանց, և բոլորս սիրենք Քեզ՝ մեր Աստծուն, ճշմարտության աղբյուրին, եթե մենք ծարավի ենք հենց դրան և ոչ թե ունայնությանը»: (8)

Բարոյագիտական ունիվերսալիզմի միտումն իր գագաթնակետին է հասնում Ի. Կանտի բարոյագիտական հայացքներում: Նա ընդունում է, որ բարոյականությունը համընդհանուր է և չի կարող լինել էմպիրիկ, իսկ բարոյական կոնֆլիկտները հնարավոր են էմպիրիկ մակարդակում: Բարոյական կոնֆլիկտների անհնարինությունը, ըստ նրա, իրական է միայն գերզգայական աշխարհում: Յեղինակի համար խիստ կարևոր է պարտականության գիտակցումը, սակայն այս անկատար աշխարհում պարտքի կատարումը երջանկություն չի առաջացնի:(9) Այսպես Կանտը հիմնավորում է հոգու անմահությունը:

Նախքան բարոյագիտական պարտիկուլյարիզմի հիմնական դրույթներին անդրադառնալը՝ «ունիվերսալիզմ - պարտիկուլյարիզմ» և «ես – ուրիշներ» հակասությունները փորձենք դիտարկել սովետական փիլիսոփա, պրոֆեսոր Ռ. Ապրեսյանի ներկայացրած սխեմայի միջոցով: Նա տրված հակաթեզերը ներկայացրել է որպես կոորդինատներ, որոնց հատման կետում ստեղծվում են հիմնական բարոյագիտական սկզբունքները՝ հաճույք, օգուտ, անձնական կատարելություն, գթության սեր, որոնցից յուրաքանչյուրը նշում է անհատի բարոյական իդեալի ձգտումը: (10)

	Պարտիկուլյարիզմ	Ունիվերսալիզմ
Ես	Յեղոնիզմ	Պերֆեկցիոնիզմ
Ուրիշներ	Օգտապաշտություն	Այլասիրություն

Ի

տարբերություն բարոյագիտական ունիվերսալիզմի, բարոյագիտական պարտիկուլյարիզմը պնդում է, որ չկան օրինական, արդարացման ենթակա բարոյական սկզբունքներ, և բարոյական միտքը զերծ է դեպքերին վերաբերող բարոյական սկզբունքների կիրառումից: Բարոյագիտական պարտիկուլյարիզմը բացառում է բարոյական մտքի ռացիոնալությունը (բարոյագիտության մեջ ռացիոնալությունը նշանակում է, որ միևնույն առանձնահատկությունը ցանկացած իրավիճակում կհամարվի միևնույն պատճառ-Ա. Մ.): Յինք ընդունելով մարդկանց հետաքրքրությունների տարբերությունը՝ պարտիկուլյարիզմն ընդունում է բարոյական կոնֆլիկտների հնարավորությունը: Կոնֆլիկտներն իրական են, քանի որ արդի աշխարհում մարդն իր ակտիվ գործունեության ընթացքում չփվում է այլ մարդկանց հետ, ովքեր, իրենց հերթին ունեն մասնավոր հետաքրքրություններ, շահեր ու նպատակներ: Այդ ամենի արդյունքում լինում են տարաբնույթ արժեքների բախումներ:

Որպես նշվածի հիմնավորում բերենք հույն փիլիսոփա Արիստոտելի միտքն այն մասին, որ «գիտելիքը համընդհանուր բնույթ ունի, սակայն գործողությունը միշտ մասնավոր է» և՛ որ «մարդու ցանկացած գործողություն ազատ է, նույնիսկ այն դեպքում, երբ գործում է կրքերի ազդեցության տակ»: Ավելին, ըստ Արիստոտելի, մարդն ունի դրական բարոյական պատկերացումներ և պատասխանատու է իր գործողությունների համար: Ուստի, կարևոր են մարդկանց բնույթը, բնածին հակումները, քանի որ բնավորության դաստիարակության և լավագույն բարոյական որակներ ունենալու համար միայն ցանկությունը, ակտիվ գործունեությունը բավարար չեն: (11)

Էքզիստենցիալիզմի բարոյագիտական հայացքներում ընդգծվում է մարդկային կյանքի եզակիությունն ու անկրկնելիությունը, դրա անհամատեղելիությունը ցանկացած ընդհանուրի հետ: Մարդը բարոյական սուբյեկտ է, ով իր վրա է վերցնում բարոյական ընտրության պատասխանատվությունը և չի հիմնվում հասարակության մեջ ընդունված վարքի նորմերի վրա: Ըստ ֆրանսիացի էքզիստենցիալ փիլիսոփա Ա. Քամյուի, «մարդը կարող է ընդունել միայն մեկ բարոյականություն, որը տրված է ի վերուստ»: Սակայն «աբսուրդային մարդն օժտված է վառ գիտակցությամբ և ապրում է առանց Աստծո, հետևաբար, մարդու արարքները ծառայում են իրեն և դրանց համար պատասխանատվություն է կրում մարդն անկախ հանգամանքներից»: (12)

Պատմական զուգահեռներ անցկացնելով տարբեր ժամանակների ականավոր փիլիսոփաների հայացքների միջև՝ նկատելի է դառնում այն հանգամանքը, որ բարոյական կոնֆլիկտները առավել իրական են դառնում անհատի հետաքրքրությունները կարևորելու դեպքում: Այդ դեպքում անհրաժեշտություն է առաջանում հասկանալ անձի վարքագծի սոցիալ-հոգեբանական հիմքերը և մեթոդաբանական լուծումներ գտնել: Փիլիսոփայական տեսություններից մեկի՝ էմոտիվիզմի համաձայն, բարոյական դատողություններ ենք օգտագործում ոչ միայն մեր անձնական զգացմունքներն ու հարաբերություններն արտահայտելու, այլև ուրիշների մոտ նման հետևանքներ առաջացնելու նպատակով: Փաստացի դատողությունների կամ ճշմարիտ, կամ կեղծ լինելը ապացուցվում է փաստերի աշխարհում առկա բանական չափանիշների միջոցով: Բարոյական դատողություններում կարող ենք բարոյական էֆեկտներ կիրառել հույզերի և հարաբերությունների համաձայնության հասնելու նպատակով: Սակինտայիրի կարծիքով, անհնար է բարոյական դատողությունները քննարկել որպես փաստացի դրույթներ, եթե բացակայում է մարդկային հիմնական նպատակների կամ գործառույթների գաղափարը: (13)

Ամփոփելով հոդվածում բերված փաստերը և դրանց հիման վրա կատարված եզրակացությունները՝ կարող ենք փաստել, որ բարոյական կոնֆլիկտներն եղել են, կան ու կլինեն բոլոր ժամանակների քննարկման առարկա, քանի որ այժմ էլ աշխարհի գրեթե բոլոր երկրներում առկա են հասարակական շերտավորումներ, որոնք կամա թե ականա փոխազդեցության մեջ են գտնվում:

Հայ իրականության մեջ ևս անխուսափելի են բարոյական կոնֆլիկտները, քանի որ մեր հասարակությունը, դեռևս լիովին ազատված չլինելով նախկին բարոյական արժեհամակարգից, փորձում է ընդունել և յուրացնել երբեմն խորթ ու անընդունելի արժեքներ: Նման մոտեցումը կարելի է դիտարկել որպես քայլ, որը կօգնի ներգրավվել համաշխարհային գործընթացների մեջ, դառնալ դրա մասնիկը և ձևավորել սեփական մտքին հատուկ և հարիր արժեհամակարգ: Գաղտնիք չէ, որ հասարակության զարգացումն ընթանում է օբյեկտիվ հակասությունների հաղթահարման ճանապարհով: Նման հակասությունների պատճառ կարող են լինել կյանքի տարբեր հանգամանքներ՝ նյութական ռեսուրսները, կարևորագույն դիրքորոշումները, իշխանական լիազորությունները, սոցիալական կառուցվածքում կարգադրային տարբերությունները, անձնական տարբերությունները: Ստացվում է, որ մարդն արժեքային տեսանկյունից յուրացնում է աշխարհը, բարոյական արժեքը համակեցություն է: Նման բարոյագիտությունը պարտադրում է ուրիշին վերաբերվել որպես ներմարդկային ուրիշի, միևնույն ժամանակ կոչ անելով ինքը քեզ վերաբերվել ինչպես մարդկությանը: Ուստի հնարավոր է, որ եզակիությունների՝ Ես-Դու հարաբերությունն իր մեջ է առնում «ունիվերսալի» և «պարտիկուլյարի» հակադրությունը: Բարոյագիտական ունիվերսալիզմը մերժում է ինքնին բարոյական կոնֆլիկտի հնարավորությունը՝ ունենալով վարքի կարգավորման համընդհանուր օրենքներ: Բարոյագիտական պարտիկուլյարիզմը դեմ էր բարոյագիտական ունիվերսալիզմի տեսակետին, համաձայն որի՝ բարոյականությունը բացարձակ սկզբունքների համակարգ է: Այն բարոյական իրավիճակի վերլուծումը մոտեցնում է կեցության կոնկրետ պայմաններին՝ խուսափել տարբեր աշխարհների հակադրումից:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Краткий словарь по социологии. М.: Политиздат, 1989, стр. 125.
2. St'u Mason H.E., Moral Dilemmas and Moral Theory, N. Y.-Oxford, Oxford University Press, 1996, p.202- 204.
3. St'u Дарендорф Р. Г. Элементы теории социального конфликта// Соц. Исследования, 1994, ' 5.
4. Запрудский Ю. Г. Внутри конфликта//Социологические исследования, 1993, ' 7.
5. Фромм Э. Человек для себя, Минск, Харвест, 2003, стр.347.
- 6.St'u Козер Л. Функции социального конфликта, М., 2000, стр. 32.
- 7.St'u Սողոմոնյան Գ. Անցումային հասարակության սոցիոմշակութային փոխակերպումները, Երևան, 2005, էջ 210-211:
8. Օգ. Երանելի, Խոստովանություններ, Երևան, 2002, էջ 265:
9. St'u И. Кант, Критика практического разума, Сочинения в шести томах, Т. 4, 1965, стр. 238.
- 10.St'u Апресян Р. Г. Идея морали и базовые нормативно-этические программы, М., 1995, стр. 260-261.
- 11.St'u Аристотель, Большая этика, Сочинения в 4-х томах, М., 1984, стр. 329-332.
12. Камю А., Миф о Сизифе, Минск, 2000, стр.76.
13. MacIntyre A., After Virtue, Duckworth, 2000, p. 10-12; 59.

ԱՄՓՈՓՈՒՄ

**ԲԱՐՈՅԱԿԱՆ ԿՈՆՖԼԻԿՏԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆ
ՈՒ ԼԻՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ**

ՄԱՐԻԱՄ ԱՏԱԼՅԱՆ

Ժամանակակից հասարակություններում բարոյական կոնֆլիկտներն անխուսափելի են: Բարոյական կոնֆլիկտը նույնացվում է բարոյական երկրճտրանքի հետ՝ ընդգրկելով նաև հանգուցալուծվող բարոյական կոնֆլիկտները, ինչպիսին է սոցիալական կոնֆլիկտը: Վերջինիս հաղթահարման կարևոր նախապայմաններ են դարաշրջանը, հասարակության սոցիալական կառուցվածքը, արժեքային համակարգը: Բարոյական կոնֆլիկտի հնարավորության և լինելիության հանգամանքն առավել ընդգծված է «բարոյագիտական ունիվերսալիզմ» և «բարոյագիտական պարտիկուլյարիզմ» մեթոդաբանական մոտեցումներում, որն էլ փորձել ենք վերլուծել հոդվածի շրջանակներում:

РЕЗЮМЕ

**ВОЗМОЖНОСТЬ И НАЛИЧИЕ МОРАЛЬНОГО КОНФЛИКТА
МАРИАМ АТАЛЯН**

Ключевые слова: моральный конфликт, моральная дилемма, социальный конфликт, возможность, бытие, универсализм, партикуляризм.

В современных обществах моральные конфликты неизбежны. Моральный конфликт идентифицируется с моральной дилеммой, также включая в себя решаемые нравственные конфликты, такие как социальный конфликт.

Для преодоления социальных конфликтов важными предпосылками являются эпоха, социальная структура общества, система ценностей. Возможность и наличие морального конфликта наиболее акцентируется в методологических подходах "морального универсализма" и "морального партикуляризма", что мы и попытались проанализировать в рамках этой статьи.

SUMMARY

THE OPPORTUNITY AND EXISTENCE OF MORAL CONFLICTS

MARIAM ATALYAN

Key words: *moral conflict, moral dilemma, social conflict, opportunity, existence, universalism, particularism.*

Moral conflicts are inevitable in modern societies. A moral conflict is identified with a moral dilemma, also including the settled moral conflicts such as the social conflict. The age, the role and social structure of the society and the system of the values are the important preconditions for handling a social conflict. The case of the possibility and existence of a moral conflict is much more highlighted in methodological approaches of "moral universalism" and "moral particularism" which we've tried to analyze in this article.